



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԴՐԱԿԱՆ

ՅԵՕՐԷՆ-ԽՄԲԱԴԻՐ
ԶԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԷԶԻԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 22 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 41

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ՔԱՀԱՆԱՆ. — Ա. Իր նիւթականը (1.)

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ. — Խաչի ճառը

ՍԻՆԵԱՅ ԴՊՐՈՅ. — (2.) Շարականները

Քիչկէան Բանայարկան Միութիւնը

ԿՍԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ. — Առաջիկայ ընտրու-
թեան առթիւ (2.)

ԹԵԼԱԴՐԻՉ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ. — «Նշու էրջա-
նիկ չըլամ

ՅՈՒԼԻՈՍ ԵՒ ՊԱՄՓԻԼԻՈՍ. — Առաջին Քրիստոնեա-
ներու ժամանակուան պատմութիւն (Շար.)

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ. — Շաբթուան կարեւոր լուրեր

ԶԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՆ

ԴՐԻԳՈՐԻՍ

ԴՆԷԼ Ս. Վ. ԴԱՂԵՄՔԱՅԱՆ

ԿՐՕՆ. ԺՈՂՈՎ. ՀԱՆԴԻ

ԱՐՇԱԿ Ա. ԱԼՊՅԱՃԵԱՆ

Թրգմ. Անգլիերէնէ

ԼԵՈՆ ԹՈԼՍՏՈՅ

«ՏԱՃԱՐ»-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է
գիմը առ Զարմայր Բանանայ Կեզիւրեան, Կ. Պոլիս, Պեթկըաշ, Հայոց Եկեղեցի:

بشيكطاش ارمنى كليسا سنده «داجار» غزتمى مديرى پاپاس زارماير افندى

Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

“ՏԱՃԱՐ”

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հինգ բաժանորդ գումարը իրաւունք ունի մէկ թերթ ձգտաւանալու

ԲԱԺԱՆՈՐԴԱԴԹԻՆԵՐ ԿԱՆԽԻԿ ԵՆ
ԾԱՆՈԹՈՒԹՅՆԵՐ ԿՐԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ ԴԻԻՐԱՄՍՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

ԲԱԺԱՆՈՐԴԱԴԹԻՆԵՐ

Պոստի և Դաւանաց՝ տարեկան	40 դրոշ
Արտասահմանի համար	» 10 ծրանք
Ռուսիա	» 4 ռուբլի
Ամերիկա	» 2 օղար
Ձեռք և ծախուի պահը	40 փարա

ԳՈՐԾԱԿԱՆՈՒՅԻՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջին. Փոխա-
նորդ Տ. Արսէն Բհնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ. — Տ. Ռաբէն Բհնյ. Դա-
րիկեան
ԱՄԵՐԻԿԱ. — Առաջին. Փոխանորդ. Տ. Պօ-
ղոս Վրդ. Դափթանեան
ԱՅՆԹԱՊ. — Տ. Գաթեղին Բհնյ. Պօղար-
ԱՏԱԲԱՏԱՐ. — Տ. Սերբրէ քհ. Պալատեան
ԱՅԻՈՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Բհնյ. Տօնէիեան
ԲԱՐԵՐԴ. — Մ. Սանսեան էֆ.
ԴԱՔԱՏԻՍ. — Առաջնորդ Տ. Բարդէն Եպս.
Կիւլաէրեան
ԴԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բհնյ. Սար-
դիսեան
ԵՕԶՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Եպիսկ.
Դիմաքսեան
ԵՐԶՆԿԱ. — Առաջին. Փոխանորդ Տ. Եղիշէ
Բհնյ. Սրամեան
ԴՐԻՆԻՆԻՍ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ.
Պարզսեան
ԷՍԿԻ ՇԷՀԻՐ. — Տ. Դալուստ քհնյ. Տ.
Դալուստեան
ԿԱՐԻՆ. — Առաջին. Փոխանորդ Տ. Ներսէս
Ա. քհնյ. Վահանեան
ԿԻՐԱՍՈՆ. — Տ. Սրապիոն քհնյ. Ալլաեան

ՀԱՂԱ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մուրաւեան
ՄՍԻՍԷ. — Տ. Հայեան Բհնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐԶՈՒՆ. — Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՍԻԴԻՍ. — Տ. Ռակի Բհնյ. Պիպեան
Շ. ԴԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բհնյ.
Տարեան
ՌԻՇԷ. — Յարութիւն քհնյ. Առաքաղեան
ՊՐՈԹՄԱ. — Առաջին. Տեղապահ Տ. Վար-
դան Ծ. Վ. Դաւադարեան
ՊԱՆՏՐԱՍ. — ՊԱՆԸՔԷՍԻՐ. — Տ. Կոմսի Բհ.
Յիրգաթեան
ՊԱՆՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եպիսկ. Կէօմբիւքճեան
ՌՈՒՍՅՈՒՐ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մըր-
նիկեան
ՌՈՏՈՍԹՈ. — Առաջնորդ. Տ. Գէորգ Ծ.
Վրդ. Աւանեան
ՍԵՐԱՍՏԻՍ. — Առաջին. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բհնյ. Օտապաչեան.
ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բհնյ. Թուխմանեան
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնիսիոս Բհնյ. Տրեղ-
եան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏՐԱՊԶՈՆ. — Առաջնորդ Տ. Սերբրէ Վ.
Սամուէլեան
ՓԱՐԻԶ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառձա-
պետ Բհնյ. Բիպարեան
ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.
ՅԻԷԶՆՈ. — Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 22 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 41

ՀԱՅ ԲԱՀԱՆԱՆ

Ա.

ԻՐ ՆԻԹԱԿԱՆԸ

1.

«Մեր մէջ չկայ հանրային ծառայութիւն մը կամ պաշտօն մը, որուն վարձատրութիւնը կամ փոխարինութիւնը այնքան անորոշ եւ անպայման ըլլայ, որքան հայ եկեղեցականութեան նկատմամբ վարձատրութիւնը»:

«Մենք ազեղ սովորութիւն մը ունինք որ միշտ տկար կը հարուստնք, կը քննադատենք, առանց մենք զմեզ պահ մը անոնց գոնուած պայմաններուն տակ դնելու»:

«... Յանկրաւի կը պահանջենք որ մեր կողմերը, պաշտօնները կամ դպիրները Ս. Հոգիով անմոռ եւ անձնութեամբ ծառայող մարգիկներ ըլլան: Զրի ծառայութիւն ակնկալելը մութացականութեան պէս բան մըն է»:

Ժողովրդային ողջմտութեան գեղեցիկ նմուշ մըն էր Բրովիսէնսէն պատուական Հայու մը՝ Տիար Նիկ. Թ. Խաչմանեանի յօդուածը Հայ Բաճանալութեան վրայ, ուր շատ իրաւացի քննադատութիւններ ուղղուած էին մէկ կողմէ քաջանալութեան եւ միւս

կողմէ ժողովուրդին հասցէին, եւ որմէ քաղեցինք այն մէկ քանի խօսքերը որ կ'երեւան սոյն գրութեան վերեւը:

Այդ յօդուածէն առաջ հրատարակեցինք կարգ մը գրութիւններ՝ քաջանալութեան ինկած վիճակին վրայ: Մեր խմբագրական պայուսակին մէջ տակաւին ունինք մէկէ աւելի գրութիւններ ալ՝ այդ նիւթին վրայ, որոնցմէ կարեւորագոյնները պիտի երեւան Տաճարի սիւնակներուն մէջ: Եւ սակայն ժամանակը եկած կը նկատենք մեր տեսութիւնը պարզելու քաջանալական խնդրոյն վրայ, որուն լուծումը՝ ինչպէս նախորդ թիւին մէջ խմբագրական ծանօթութեամբ մը կը շեշտէինք, անհրաժեշտ կը նկատենք՝ Հայ Եկեղեցւոյ թարեկարգութեան առաջ. որովհետեւ ամենէն բարեկարգուած Հաստատութիւնը, ըլլայ ան կրթական, բարեգործական կամ կրօնական, երբէք չպիտի կրնայ սպասուած արդիւնքը առաջ բերել, երբ իրեն համար յատկապէս պատրաստուած, իր պարտականութեան կատարելապէս գիտակից ու կարող պաշտօնէութիւն մը չունենայ:

Ամենէն հոյաշէն եւ հարուստ հի.

ւանդանոց մը չի կրնար իր տեսակին մէջ տիպար հաստատութիւն մը ըլլալ, երբ արուեստին հմուտ, փորձառու եւ անձնուէր բժիշկներ չունի:

Կրթական փառաւոր ծրագիրներ եւ հոյակերտ վարժարանի շէնքեր խղճալի արդիւնքներ տուած են ցարդ, պարզապէս անոր համար որ կարող ուսուցչի կարօտը կը քաշենք մինչեւ այսօր:

Նոյնն է եկեղեցւոյն համար: Ի՞նչ օգուտ արարողութեանց կրճատումէն, կամ կրօն. սլաշտամունքին աշխարհաբարի վերածուելէն եւն. եւն., երբ այդ եկեղեցիին բեմը թափուր է ժողովրդեան հոգեւոր պէտքին գիտակից սերճախօս քարոզիչներէ, երբ չունի արուեստին սիրովը տողորուած, զուտ նայ առուեսին հուրիւրուած երաժշտներ, երբ վերջապէս չունի քահանայութիւն մը՝ իր կոչումի բարձրութեան վրայ, եւ ընդհակառակն երբ այդ գասակարգը որ ուղղակի ժողովրդային կեանքին հետ ախքանս սերտ շփում մը ունի եւ կրնանք ըսել թէ անոր հետ շաղուուած է, կը գտնուի նիւթապէս, բարոյապէս, եւ իմացականապէս «խնկած» վիճակի մը մէջ:

Այս յօդուածներու շարքը շատ պիտի երկարէր, եթէ ուզէինք կարծիքներ յայտնել հայ քարոզիչներու եւ հայ եկեղց. երաժիշտներու ալ վերայ (*): Առ այժմ՝ կ'ուզենք սահմանափակուիլ քահանայական հարցին մէջ, ուշադրութեան առնելով իր նիւթական, բարոյական եւ իմացական վիճակը, եւ ջանալով ցուցնել զորձադրելի միջոցներ, այդ երեք տեսակէտներով ալ բարձրացնելու չայ փահանայութիւնը:

Իբրեւ խմբարհ մէկ անդամը այդ

(*) Երաժշտական Յանձնաժողովը, որուն կազմութիւնը ծանուցինք մէկ քանի շաբաթ առաջ, աղուոր ծրագրեր ունի Հայ եկեղց. երգեցողութեանց կանոնադրման համար: Կը սպասենք իր աշխատութեանց յառաջանալուն, գիտակցօրէն մեր կարծիքը յայտնելու համար:

«խնկած» գասակարգին, իրաւունք կուտամ ինքզինքիս՝ սկսիլ իր նիւթակաշէն, եւ արձագանգ ըլլալ իր արդար դժգոհանքներուն, քանի որ ասկէ առաջ համարձակօրէն ի վեր հանած եմ իր քննադատելի կողմերը, եւ այս յօդուածաշարքին մէջ ալ գուցէ առիթը պիտի ունենամ նոյնը ընելու:

Այդ դժգոհանքները ծանօթ են, մէկէ աւելի գրութիւններով՝ Տաճարին մէջ ալ պարզուած: Իբրեւ յատկանշական եւ բարացուցական տողեր, շահեկան կը համարինք սակայն մէջ բերել մէկ քանի տարի առաջ խարբերի գիւղէ մը ուղղուած թղթակցութեան մը (*) մէկ քանի հատուածները. —

«Պարբերդի գաւառին մէջ գտնուող բոլոր քահանաներն ալ, առանց բացառութեան, տրանջողներ են իրենց աղետալի վիճակին վրայով: Շատ խեղճ եւ աղքատ են: Իրենց հագուստը չափ աննշան եւ ողորմելի է: Եթէ անոնց տուներու սեմերէն ներս մտնես, պարզ կահաւորման մը իսկ պակասը պիտի նշմարես: Վերջապէս բոլորն ալ նիւթապէս չափ արգահատելի վիճակ մը կը ներկայացնեն: Տխուր եւ արտւմ կ'անցնին անոնց եւ անոնց մանրկեկ զաւակաց վայրկեանները»:

Թղթակիցը յիշելէ ետքը թէ խարթի 75 գիւղերուն մէջ միայն 35 քահանաներ կան, կը հաստատէ թէ ըստուար մեծամասնութիւնը անկարող է անսխալ կարգալու մինչեւ անգամ հասարակ գրաբար ընթերցուած մը, եւ գոց սորվածն ալ կ'ըսէ առանց իմաստը հասկնալը:

Յետոյ կ'աւելցնէ. —

«Ներկայ քահանային թշուառ եւ արգահատելի կենցաղը, նաեւ պատուոյ ոտնակոխուիլը մեծապէս արգելք հանդիսացած է արժանաւոր քահանայից թիւը աւելնալուն: Բնաւ փափաքողներ չկան քահանայական ասպարէզին: Թէեւ ժողովուրդը կը

(*) Դեր. Տ. Բարգէն եպիսկ. Առաջին 1906 յունիս 10ի թիւին մէջ հրատարակուած:

պօռայ . « Մեզի քարոզող կամ զարգացած քահանաներ հարկ են, առէտ եւ միայն արարացու դասակարգը ալլելս տեղ չունի քահանայութեան պաշտօնին մէջ », սակայն երբ զարգացած անձ մ'ալ քահանայացնեն, դեռ քառսունքէն դուրս չելած, կը սկսին զայն ստրկացնելու եւ անհաստական քահանայքի ծառայեցնելու ջանքեր ցոյց տալ, եւ անկից ետքը անտեղի բողոքազերեր գիւղել Առաջնորդարանի սեղանին վրայ, եւ սուս գրոյցներ եւ գրախօսութիւններ ցանցընել ամեն կողմ, խեղճ նորոնծային պատիւը աղարտելու համար : Լքուած եւ անկեալ քահանայութիւն » :

Այս ակնարկը պատկերը գծուած է գաւառի մէջ հինգ տարի առաջ : Բայց անցնող հնգամեայ շրջանէն ետք ալ վիճակը նոյն է գաւառի թէ Պոլսոյ մէջ, եւ կը համարձակինք ըսելու թէ աւելի մոլթ երանգներ ստացած է : Սրտի խորունկ ցաւով կ'ըսենք թէ քահանայութիւնը այդ օրէն ի վեր բարձրացած չէ ո՛չ նիւթապէս եւ ո՛չ իմացականապէս : Նոյն չքաւար, մուրացկան վիճակը ամենուրեք, նոյն արհամարհանքը անուս քահանաներու մասին, եւ, աւա՛ղ, նոյն հակակրօն թիւնը քիչ շատ զարգացեալներու հանդէս, երբ տանք գիտակցութիւն ունին իրենց պաշտօնին, կամք ունին, արժանապատուութիւն ունին, ու չեն կրնար հագնիլ կեղծաւորի դիմակը, կամ գլուխ ծռել քմահաճոյքներու առջեւ :

Օհ, երբէք չենք ըսեր թէ բոլոր քահանաներն ալ անմեղ հրեշտակներ են : Անոնց մէջ կան շահամուլներ, փառասէրներ, գեղծարարներ : Բայց կ'ըսենք համարձակօրէն թէ ժողովուրդը խոշորացոյցով կը դիտէ քահանային մարդկօրէն ունեցած ամենէն թեթեւ մէկ տկարութիւնը : Կ'ըսենք թէ ժողովուրդը իր չտուածը կը պահանջէ քահանայէն :

Զարգացում չէ տուած, եւ զարգացեալ քահանայ կը վնասուէ :

Բարձր բարոյական մը պահպանե-

լու վիճակին մէջ չի դնել իր քահանան, կամ գուցէ բարձր բարոյականի տէր մէկը չընտրել, ու յետոյ այդ չքնաղ յատկութիւնով օժտուած կ'ուզէ տեսնել զայն :

Նիւթական բարեկեցիկ վիճակ մը չապահովելը, շատ անգամ չոր հաց մը հայթայթելու միջոցն ալ չի տար, եւ յետոյ կը քննադատէ զայն թէ դրամական պահանջումներ կ'ընէ :

Բայց ինչո՞վ ապրի քահանան, եւ ապրեցնէ իր ընտանիքը, զաւակները : Գանձանակի կամ սնուկի հասոյթով : Մենք թաղեր գիտենք Պոլսոյ մէջ որ այդ հասոյթը՝ ամբողջ շաքարուան մեջ՝ 2.3 օխա հացի դրամ չի հայթայթել :

Կնո՛ւքով կամ հնջեցեալով : Դարձեալ շատ թաղեր Պոլսոյ մէջ — ի բաց առեալ մէկ քանի ջոջ թաղերը — ամսական հազիւ 40-50 դրժ մը կ'ապահովեն ատոնցմով :

Հարմարով : Քահանային հասոյթի այդ գլխաւոր մէկ աղբիւրն ալ հետզհետէ ցամքելու վրայ է՝ նախ ամսականութեանց հետզհետէ նուազման, երկրորդ ժողովրդեան անսլարտաճանաչութեան, եւ երրորդ Ազգ. Պատրիարքարանին — ներկայ Տնտես. խորհրդոյ օրով — քահանայից պսակդրամի գանձման դրութեան վերջ տալ ուղեւուն հետեւանօք :

Կը մ'նայ տունօրհնէքը, որ պէտք է խոստովանիլ թէ քահանային ամենէն կարեւոր հասոյթն է. եւ սակայն, ի բաց առեալ մէկ քանի ջոջ եւ բացառապէս նպաստաւորեալ քահանաներ, — արդիւնք ծխատիրութեան վաղեմի կանոնին անտեսուելուն, — Պոլսոյ քահանայից ամենաստուար մեծամասնութիւնը այդ հասոյթով տարուան հազիւ մէկ երկու տոնսը կրնայ իր ընտանիքին ապրուստն ապահովել :

Եւ սակայն, հակառակ նիւթական այս աստիճան ճղճիմ, անկայուն վիճակի մը, պատուաւմնդիր քահանաներ սրտի խորունկ ցաւով կը լսեն միշտ

Ժողովրդային կէս կատակ կէս իրաւ հեղհուկթիւններ՝ թէ «քահանան մեռելէ կ'առնէ, կ'սուրբէ կ'առնէ, հարսնիքէ կ'առնէ, եւն. եւն. ա'լ ի'նչ կ'ուզէ. չե'ն կշտանար»:

Աւագ, երեւոյթները ս'րքան խաբուսիկ են:

Եւ ցաւալին այն է որ պաշտօնական մարմիններ՝ (ինչպէս՝ Թաղական խորհուրդներ, Տնտես. Խորհուրդ, Պատ. րիարքարան) իրենց ընթացքով հաստատել կը թուին Ժողովրդային սխալ եւ անարդար համոզումը, եւ անպաշտպան կը թողուն Հայ հոգեւորականութեան այս «ինկած» դատակարար, գերադասական հակասութեամբ մը՝ միշտ պատահելով հանգերձ անոր բարձրացումը:

Ի'նչ կարելի է ընել այս ցաւալի վիճակին ի դարման:

Յառաջիկայ յօդուածով մը, — որով պիտի փակենք նիւթականի հարցը, — պիտի ջանանք ցարդ ցուցուածներէն աւելի գործնական, դիւրաւ գործադրելի միջոցներ պարզել:

ՁԱՐԴԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ԽԱՉԻՆ ՃԱՌԸ

«Ձի հառ խաչին կորուսեցոյ յիմարութիւն է, ալ մեզ փրկելոցս զօրութիւն Աստուծոյ:» Ա. Կորնթ. Ա. 18

(Վաղուան ճառու Գիրքէն)

Տարսոնացի հռանդոս Առաքեալը որ բոլոր հոգիով ու բոլոր սիրտով նուիրուած մէկն էր Խաչի Ճառին, Խաչին քարոզութեան, արդէն անկեղծաբար զրած է Գաղատացիներուն. «Բայց ես, քա'ւ լիցի որ պարծնամ, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով աշխարհ ի խաչ երած է ինձ, եւ ես աշխարհի»։ Արդէն՝ հակառակ անոր որ Հրեաները նշան կը խնդրէին, իսկ Յոյները իմաստութիւն կը փնտռէին, Պօղոս Առաքեալ կը յայտարարէր. «Իսկ մենք կը քարո-

ղենք զխաչեալն Քրիստոս՝ Հրէից զայն թակղութիւն եւ Յունաց յիմարութիւն»։ Ու այս նախաձեռնողի Առաքեալէն ետքն ալ շատեր, շատեր իրենց բոլոր կեանքը նուիրեցին Խաչին քարոզութեան, հոգէ թէ յաճախ ծաղրուեցան աշխարհիս նշանախնդիր ուսեալներէն ու յանուն դիմաւորութեան ճառող իմաստուններէն։ Եւ արդէն Քրիստոսի Եկեղեցին աշխարհի վերայ ուրիշ կոչում մը չունի, բայց միայն բարձրաբարբառ աւետարանել Խաչին ճառը, Խաչին քարոզութիւնը, որ միակ սփոփանքը պիտի ըլլայ աշխարհիս պատանքներէն վհատած հոգիներուն, ամէն անոնց՝ որոնք կարօտաղին կը բաղձան փրկութեան փարաթին մէջ վերջ տալ իրենց հոգիներուն սպառնացող փորձութեանց, արիւնկալի զայլերուն յարձակումներուն, անոնց՝ որոնք վերջապէս վայելիլ կ'ուզեն փրկուած հոգիին երկնային խաղաղութիւնն ու երջանկութիւնը։ Ուրեմն հոս համառօտակի նկատողութեան անոնք թէ ի'նչ է Խաչի Ճառը, թէ ի'նչ է մարդոց վերաբերումը անոր հանդէպ, եւ թէ վերջապէս Խաչի Ճառը պիտի կրնայ մարդոց փրկութեան մեծ գործը ի կատար հանել։

Ա. Ի՞նչ է Խաչի Ճառը։ Ամէն ալ մեր կեանքերու կանուխ աւարիքէն, մայրական ծունկերուն քով կը սորվինք թէ ի'նչ է Խաչը, Խաչին պատմութիւնը, ու անկէ կ'սկսի Խաչին Ճառը։ Գիտենք թէ Խաչը, երբեմնի մահուան ու նախապիտիքի գործիքը, հիմա փառքի ու յաղթութեան նշան մըն է բոլոր քրիստոնեայ հաւատացեալներուն։ Գիտենք թէ բոլոր քրիստոնեայ աշխարհը իր յարգանքը կը բերէ, գնելու համար Խաչին պատուանդանին՝ իբրեւ սրտաղին նուէր, ու կը խոնարհի անոր առջեւ։ Գիտենք թէ Խաչը ա'լ հարստք, յոյս, սէր, կը նշանակէ բոլոր անոր հաւատացողներուն, եւ ինչպէս կենդանի Աստուծոյ տաճարներուն՝ մարդոց հոգիներուն վրայ բարոյապէս ու հոգեւորապէս, նոյնպէս ալ Քրիստոնեայ ազգերուն հոյակապ ու մեծակաւոյց տաճարներուն վրայ կը բարձրանայ ճաճանշափոտ։ Եւ ինչո՞ւ այս ամէնը։ Որով-

հետեւ. ինչպէս պատմութիւնը զոհուող Մեծ Սիրոյն պատմութիւնն է. «Քանզի Աստուած աշխարհս սիրեց զաշխարհ, մինչեւ իր միածին Որդին տուաւ, որպէս զի ամէնը որ անոր հաւատայ՝ չկորսուի, այլ յաւիտեական կեանք ունենայ»։ Որովհետեւ զարեբու մեծ կարօսը, փրկութեան կարօսը, ինչպէս միայն յաղեցում գտաւ, ու հաւատացեալ հոգիներու համար ինչպէս փրկութեան երաշխաւորութեան կնիք եղաւ։ Որովհետեւ աշխարհ միայն ինչպէս վրայ կըցաւ տեսնել Աստուածային այն երկարող թաղութիւնը, որոնք պիտի գրկէին անասակ-որդի մարդկութիւնը, տանելու համար հայրական տունին ինքնութիւններուն ու երանութիւններուն։ Աստուածորդին մեծաւ մեր փրկութեան համար, հաւատանք ու պիտի փրկուէինք։ Ահա՛ ինչպէս ձառը, պարզ, ամփոփ, սրտագրաւ եւ հոգեցունց. «Հաւատա՛ եւ պիտի փրկուիս»։ Այսչափ միայն։ Այս է ինչպէս քարոզութիւնը որ միջինում որ հոգիներ լեցուցած է երկնաւոր խաղաղութիւնով։

Բ. Խնդիր մարդոց վերաբերումը ինչպէս ծառայի հանդէպ։ Առաքեալը ինքն է որ կը պատասխանէ այս հարցումին. ինչպէս ճառը կորուսեցոյց յիմարութիւն եւ, թայց մեզ փրկեցոյց զօրութիւն Աստուծոյ։ Միշտ գտնուած են գաղափարի այս երկու հոսանքները, հաւատքի այս կրկին տեսակները ինչպէս քարոզութեան մասին։ Աշխարհ շատ ունեցած է նշան խնդրող Հրեաներու եւ իմաստութիւն փնտռող Յոյներու սերունդներ, որոնք ինչպէս քարոզութեան համար պարզապէս յիմարութիւն է ըսած են, ու անտարբերի եւ մինչեւ անգամ արգահատողի նայուածքով ուցորա ժպիտով անցած գացած են։ Բայց ատենք չեն եղած մարդկութեան սիրտին խօսողները, անոնց հստակ պատգամները իրենց հետ մոռցուած են, ու անոնց ամբարտաւան գատաւանները իրենց վրայ դարձած են։ Անոնք մարդկութեան հոգիին չեն խօսած, այլ քանի մը սկեպտիկներու, քանի մը մինչեւ անգամ իր գոյութեան իսկ վրայ կասկածողներու հի-

ւանդ ու անհաւատարակչի միտքերուն։ Ու անոր համար ինչպէս ճառին վրայ այս տեսութիւնը անհիմն է։ Եթէ երբեք այս գիտուններու (°) շարքերէն դուրս հանենք անբարոյականները, անտարբերները, միտքով հիւանդները, ու անհաւատի յիմար փառքին ցանկացողները, անոնց գրեթէ ոչ ոք կը մնայ որ միտքով ու սրտով հաւատացած ըլլայ ինչպէս քարոզութեան յիմարութիւն մը ըլլալուն։ Այո՛, Առաքեալը իրաւունք ունի երբ կ'ըսէր թէ ինչպէս ճառը յիմարութիւն է սոսկ կորուսեալներուն համար։

Բայց կան նաեւ փրկեալներ, որոնց համար ինչպէս ճառը զօրութիւն Աստուծոյ է, եւ իրաւամբ, որովհետեւ այս վերջիններէն ինչ որ կը վկայեն, իրենց անձնական փորձառութենէն կը վկայեն։ Աչքերը բացուող կոյրը ուրիշ բան մը չի գիտեր բացի սա իրողութենէն թէ առաջ կոյր էր ու հիմա կը տեսնէ։ Ասոր չափ զրական ու շօշափելի ապացոյց կարելի է գտնել։ Յուսահատ, խղճախայթէ տառապեալ մեղաւորը կ'ըսէ թէ հաւատաց ու փրկուեցաւ, ասոր տարակուսիլ կարելի է։ Եթէ հաւատացեալը ինքնախաբուծեան մը զոհ կ'երթայ, այդ գիտունները (°) ինչէն գիտենք թէ իրենք չեն ինքնախաբուծեան զոհը, Հապա այս երկու հաւատքներու արդիւնքը. ո՛ր, անբաղդատելի է։ Մէկը իր դիտութիւնով աւելի անվստահութեան, յուսահատութեան, տգիտութեան ու մոլորումի մէջ կ'իյնայ, իսկ միւրը իր ազդեցութեամբ, կամ ըսենք ինքնախաբուծեամբ աւելի կը զօրանայ, կ'առաջնորդուի, կ'երջանկանայ, կը սրտապնդուի, եւ ուրախութեամբ կը կատարէ իրեն յանձնուած ամէն պարտականութիւն։ Այս երկու հաւատքներէն, երկու տեսութիւններէն ո՞րն է որ զաշխարհ պիտի բարձրացնէ, ազնուացնէ, ամփոքէ, չիմէ ու բարգաւաճեցնէ։ Ինչպէս քարոզութիւնը իրեն յիմարութիւն, թէ իբրեւ զօրութիւն Աստուծոյ նկատելով աշխարհ պիտի կրնայ փրկուիլ ու սրբանալ։ Ուրեմն որչափ ատեն որ հաւատացեալներու շարքեր իրենց անձնական փորձառութեան գիտակ-

յութեամբ զօրացած բարձրագործաւ Վր-
կային խաչին քարոզութեան՝ իրեն Աս-
տուծոյ զօրութիւն , պէտք է խօսիլ խաչի
ձառը , պէտք է յարատեւել խաչին քա-
րոզութիւնը , որ աշխարհ կարենայ զանել
փրկութեան ճամբան : Խաչին ճառագայ-
թող լոյսը միայն կրնայ պարզել կեանքի
ճամբան :

Գ. Խաչի ձառը պիտի կրնայ մարդոց
փրկութեան մեծ գործը ի կատար հանել :
Ա՛յլ ուրիշ տեսակ պատասխանի տեղի չի
մնար , բայց միայն բոլոր հոգիով « Այո՛ »
ըսել : Որովհետեւ այս համոզումը զօրա-
ցած է անցնային փորձառութիւնով , ներ-
կային օրինակներով ու ապագային ոսկի
յոյսերով : Խաչի ձառը արդէն մարգկու-
թեան յոյսին իրականացումն է եւ բազ-
մանքներուն պատկումը : Ուրեմն պէտք է
աւետարանել այդ բարի լոյսը , պէտք է
հոգաւելլ այս մեծ աւետարանը :

Խաչին վրայ կան սէր , զոհողութիւն ,
յոյս , յաղեցում , հաւատք , մխիթարու-
թիւն , առաջնորդութիւն եւ մէկ խօսքով
կեանք . ու այս բոլորը արդէն կը բաւեն
ի կատար հանելու համար մարդոց՝ այսին-
քն աշխարհիս փրկութեան մեծ գործը :
Սերունդներ փրկող սէրը դեռ չէ անան-
կացած , կեանքեր փրկող ձեռքը դեռ չէ
տկարացած , որովհետեւ ան յաւիտեանա-
պէս չի տկարանար : Ուրեմն կարելի՛ է
տարակուսիլ անոր զօրութեան վրայ : Ահա
ասոր համար է որ Խաչի ձառը զօրու-
թիւն Աստուծոյ է :

Ուրեմն , ո՛վ դիտուններ , դպիրներ , ի-
մաստուններ , Խաչին տակ եկէք . դուք
ալ եկէք մոլորեալ ոչխարներ , անառակ
որդիներ , մաքառողներ ու մեղաւորներ ,
մեծեր ու պզտիկներ , հարուստներ ու
աղքատներ , եկէք ու Խաչին ձառը մօտիկ
ըրէք . ան ձեր ամէնուն ալ սիրտին ու
հոգիին կը խօսիլ Փրկութիւնը անոր թե-
ւերուն տակ է . անոր շուքին տակ զովա-
ցուցէք ձեր այրած ճակատները , անոր
մաքրագործող աղբիւրէն լուացէք ձեր ան-
մաքուր սիրտերը : « Բանգի խաչին քարո-
զութիւնը կորուսելոց յիմարութիւն է ,
բայց մեզ փրկելոցս զօրութիւն Աստուծոյ » :

ԳՐԻԳՈՐԻՍ

ՍԻՆԵԱՅ ԴՊՐՈՅԸ

Ձ. (1)

ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ

Սիւնեաց զպրոցն իր գրական անկախ
ոգույն շնորհիւ իր արդար բաժինն ունի
Շարականներու մէջ : Շարականներու
ծագումը կ'ենէ մինչեւ Բարդաճան հուստ
ասորին (154-222) . հակադրեցիկ զօրութիւն
մը յառաջ բերելու նպատակաւ Ս. Եփրեմ
(Վ. դար) եւս ունեցաւ իր Շարականները ,
եւ պատճառ եղաւ անոնց ծաւալմանը :
Բանաշնորհն Ս. Մեսրոպ եւ աշակերտներն
օգտուելով եկեղեցական երգի այդ գրու-
թեանն , հազիւ համարձակեցան՝ չափազանց
զգուշութեամբ՝ արձակ շարականներու
երգեր ներմուծել մեր եկեղեցւոյ մէջ , եւ
այդ ամենաշին շարականներն (ապալիսա-
րութեան) յօրինուած են սաղմոսական եր-
գեցողութեանց մէջ աշխատութեան մը
խառնմամբ , ինչպէս յայտնի է իրենց ոճէն
ու կազմութեանն : Աւելի ետքը սաղմո-
սական ձևերն ու հայցուածները տակաւ
տեղի տուին պարզ եւ առանց ռաբի ներ-
քողներու , երբ մանաւանդ մեծ տանջու-
յառուկ հանդիսաւոր երգերու պէտքն
ստեղծուեցաւ : Այս կարգին մէջ շատ ա-
ւելի առաջ դացին մերիները , եւ ճշմարիտ
խերութեամբ-շարականներու սկիզբը գրուե-
ցաւ : Հոս ահա տակ կը սկսի Սիւնեաց
Դպրոցին որոշ հեղինակութիւնը շարակա-
նաց : Մեր մէջ թէեւ շարականի ծա-
գումն ինչպէ՛ս ակնարկեցինք վերեւ՝ տ-
սորական է , բայց քերթուած-շարական-
ներն իրենց ուրոյն ձևերովն ու նկարա-
գրով եթէ կատարելապէս նմանութիւնը
չունին յաւանականին (2) , զէթ հետեւողու-
թիւն մ'են , եւ ասի ինքնին ալ չենք է
Սիւնեաց Դպրոցին Նաեւ՝ բնագիտութեան
խօսելով՝ շարակնոցին մէջ կը հանդիպինք
երկու տեսակ ոճի , մէկը պարզ ու ան-

(1) Շար. 39րդ Թիւն :

(2) Յունական շարականի կազմակերպութեան
ն , օրինաց մօտին տե՛ս AB. MARTIGNYի գրաւն ,
էջ 346, Hymnes :

խառն շարադրութեամբ եւ Ս. Գրքի հետեւողութեամբ, իսկ միւսը՝ գրեթէ բանաստեղծական նոր բառերով, քերականական խառն զարձուածներով, մերթ իւրեքն արանութեամբ ու մերթ ուռուցիկ քաղաքութիւններով: Այս երկրորդ ոճն ունեցող շարականներ ինքնին կը մատնուին իբրեւ Սիւնեաց Դպրոցին:

Շարականներու կազմակերպութիւնն երեք շրջաններու կը վերագրեն ոմանք (Կ. Կոստանեանց եւ այլն), Է. Ժ.Բ. եւ Ժ.Գ. դարերու կատարուած. մինք կը կարծենք թէ՛ ըստ Եղիշէ Դուրեան Սրբազանի տեսութեան՝ յարմարագոյնը չորսի բաժնին է այդ կազմակերպութիւնը, Է. Ժ.Ա. Ժ.Բ. եւ Ժ.Գ. դարերու: Շարականներու առաջին կարգադրութիւնն է. դարում եղած է Դպրեւանքի առաջնորդ Բարսեղ Ճոնի ձեռքով, որուն յանձնած է Ներսէս Դ. կաթողիկոս շարականներու ընտրութեան գործը, նկատելով որ անոնց յոյժ բազմաճառով չափազանց թիւը՝ ժամերգութեան խանդարումին եւ երկարաձգութեան պատճառ կ'ըլլար Բարսեղի ընտրած շարականները կոչուեցան ճոնընէի, որոց հեղինակութիւնն առաջ է Ը. դարէն:

Երկրորդ կարգադրութիւնը գրինք Ժ.Ա. դարում: Աւանդութիւնը շարականներու մեծագոյն բաժին մը կը հանէ Պետրոս Դեփաղարձ կաթողիկոսին: Անհաւատալի չհրեւիր մեղի այս կաթողիկոսին գոնէ Եկեղեցւոյ բարեկարգութեան մասին բարեացակամութիւն ունենալը, սակայն իրողութիւնը սա՛ է թէ Պետրոս ոչ այնքան շարականներ հեղինակած, որքան իր ժամանակին հրամայած է բազում շարականներու կարգադրութիւնը կատարել, որուն պէտքն զգալի էր դարձած յոյժ վառն զի թէպէտ Բարսեղ Ճոն այդ կարգադրութիւնը ժամանակին ըրած ու սանձաւարակած էր շարականներու առաւելազանց թիւը, բայց տակաւին կը շարունակուէին Ժ. դարում նախանձնողէմ երգեցողութիւններն, ինչպէս կ'ապացուցանեն Խոսրով Ա. ձեռագրեաց եպիսկոպոսի տողերը (1): Երկրորդ շրջանում (Ը. — Ժ.Ա.

դար) ապաքէն բաւական թուով շարականներ յօրինուած են, որոնք իրաւունք ալ կրնան ունենալ առանձին շրջան մը գրուելու. եւ որոնց գրեթէ բոլոր հեղինակները Սիւնեաց դպրոցի աշակերտներ են, իրենց յատուկ լիզուի՝ ոճի՝ զարձուածքի բարացուցական հանդամանքներով:

Շարականներու հեղինակութեան մէջ պարտք կը զգանք մասնաւորապէս յիշատակել Սիւնեաց Դպրոցի ղէթ երկու արժանաշար ներկայացուցիչներն՝ Մովսէս քերթողի եւ Ստեփանոս Սիւնեցւոյ (Ը. դար) անունները. վառն զի առաջինն իր արդար բաժինն ունի հետեւեալ շարականներու մէջ, 1. Մոնղեան Ճրագալոյցի Ուրախացի, 2. Աստուածայայտութեան ութ օրերու կարգը, 3. Տեառնընդառաջի կանոնը, 4. Յարութեան Հարցերէն մէկ քանին, 5. Յարութեան Մեծացուցէները, 9. Հոգեպաշտեան եւ Վերափոխման առաջին օրերու կանոնները, եւ 7. Անքառաւ ծաղիկը եւ այլն: Իսկ երկրորդին՝ այն է Ստեփանոս Սիւնեցւոյ, որ հազիւ 47 տարեկան հասակաւ զիջեր մը իր խաղաղիկ քունին մէջ զլիսատուեցաւ՝ կանացի կատաղութեամբ մոլեղնած հերարձակ զուլետով եւ հրաժայթը աչքերով հրէշ պոռնիկի մը ձեռամբ, այդ կենադրաւ եպիսկոպոսին կը պարտինք Աւագ Օրհնութեանց շարականներու սկզբնաւորութիւնը, զի «Բաժանեաց զութն ձայնն եւ կարգեաց շարեաց զյարութեան օրհնութիւնն, երգեաց եւ կյուրդս քողորհամա, յարմարեաց զստողողին Յինանց եօթն եղանակօք յոյժ խորհրդաւոր, եւ զպահոցն որ յաղուհացն երգի(1): Այս պատմական վկայութեան վրայ երկբայելու ո՛ր եւ է պատճառ չունինք երբէք. եւ ի՞նչ ոմանք թարգմանչաց աշակերտներէն ուրիշ Ստեփանոսի մը կ'ընծայեն Աւագ Օրհնութիւնները, մինք՝ ըստ Օրբէլեանի արժանահաւատ վկայութեան՝ անմահն Սիւնեց-

եւ կեղծաւորութեամբ եւ փառասիրութեամբ կամ խեղճութեամբ լռել կամ նախանձով զերգս եղանակելը: (Մեկն. պատարագի, էջ 67):

(1) Նաեւ կիրակոս պատմիչ կ'ըսէ. «աբար եւ երգս հոգեւորս, քաղցր եղանակաւ շարականս, կը-ցորդս եւ այլ երգս»: (Կիր. 40):

(1) «Թողում ասել եւ զհակառակութեամբ եւ զնախանձով առ իրեարս վարելն ի ժամ աղօթիցն,

ւոյն բանաստեղծական գրչին արդիւնքը կ'ընդունինք զայնս, բացի վառ ձայն (զի.) Օրհնութենէն, զոր երգեց Շ նորհալին Ս. Ներսէս:

Ի հնումն մեր Եկեղեցւոյ մէջ Սաղ-մոսի կանոնն աւարտելէ յետոյ յարակից մարդարէական օրհնութիւնները կ'երգէին(1): Ստեփանոս Սիւնեցի մարգարէական այդ ստան Օրհնութիւն-Սաղմոսները փոխեց Օրհնութիւն-Հարականներու, զայնս ութ ձայնից բաշխելով, եւ իւրաքանչիւր բաժնին վրայ «քաղցրահամ կցուրդներ» երգեց, որոնք եղան սաան պատկեր շարժանները՝ համապատասխան Սաղմոսի նոյնաթիւ մարգարէական օրհնութեանց: Ասոնց անուններն ալ իւրաքանչիւր պատկերի կիցը նշանակուած են համառօտագրութեամբ եւ են՝ ահ կամ առն «Օրհնեցուք».— Նայ «Նայեցարուք».— Զին «Զի հուր բորբոքեցաւ».— Ծ. «Ծաներուք».— Հաւ «Հաստատեցաւ».— Գիշ «Ի գիշերաց».— Եւա «Ես սասցի».— Ան «Օրհնեցէք».— Նեղ «Ի Նեղութեան».— Տոյ «Տէր զլուր».— Երանելին Ստեփանոս իր երգածները սահմանեց որ Յինանց ստորագի ըլլան եօթն եղանակներու վրայ: Եւ, ահ, թժ, թի, զժ, զժ եւ զի: Յինանց այս Օրհնութիւնները կոչուեցան Աւագ, ամենէն առաջինը եւ ամենամեծ Տանին՝ Բրիտանոսի յարութեան նուիրուած ըլլալնուն համար: Պատմիչը՝ նաեւ ազուհացից մէջ երգուելու համար ալ Օրհնութիւններ յարմարցուց կ'ըսէ. հաւանաբար ազուհացից Ողորմեա շարականներու քաղցին ու պահոց Օրհնութիւններն անանցմով կաղմուցն ինքն Սիւնեցին եղած է: Ի մի բան, առաջին անգամ Ստեփանոս Սիւնեցին մտցուց մեր Եկեղեցին Օրհնութիւն կոչուած շարականի երգեցողութիւնը, միայն Յինունքի մէջ երգուելու համար:

Շարականներու կաղմուկերպութեան երրորդ եւ չորրորդ (ԺԷ. եւ ԺԸ. գար) չըջաններուն վրայ եւս խօսիլ մեր նիսթի սահմանէն դուրս կը մնայ, քա-

նի որ մեր նպատակն էր շարականներու հեղինակութեան եւ կարգադրութեան մէջ Սիւնեաց Դպրոցին արդար բաժինը տալ միայն, նկատի առնելով որ երկրորդ չըջանում (Ը.— ԺԱ. գար) մինչեւ Պետրոս Գետապարձի ժամանակը, բաւական թուով շարականներ յօրինուած են արդէն Սիւնեաց Կարգապետներու հեղինակութեամբ:

ԳՆԷԼ Ծ. Վ. ԳԱԼԵՄԲԵԱՐԵԱՆ

Գասըղիւղ

ԿԻՐԿԵԱՆ ԲԱՆԱՆԱՅԱՆ ՄԻՈՒԹԻՆԵՐ

Կրօնական ժողովս զոհուակութեամբ ստացած է Սիւնեացի Հայ գիւղերէն՝

Հաճի-Հապիպիյի Արժ. Տ. Աւետիք Մարտիրոսն

Նօղուճ-Օլուղի Արժ. Տ. Արքայապետ Տ. Գալուստեան

Եղաբը-Պէյի Արժ. Տ. Յարութիւն Շէրպէթեան

Վաղրֆի Արժ. Տ. Պօղոս Քիւսպէեան

Եւ Կառոյրիկէի Ղընէմիյէ գիւղի Տ. Կարապետ Փափաղեան քահանայ հարց հաւանութեան թղթերն՝ հանդերձ սրտագին չնորհակալեօք՝ ի մասին Կիրիկեան Բանանայական-Միութեան:

Ի Դիմաց Կրօն. Ժողովոյ

Ասեւաղայի

Ասեւաղէս

ՅՈՎ. ԲԶ. ԷԹԱԼԻՔԱՆ ԵՐ. ԲԶ. ԵՍԱՅԵԱՆ
Հալեպ, 6 Հոկտեմբեր

Խմբագրութիւն «Տանար»ի

Կիրիկիոյ քահանայ եղբարց կաղմէ ձեռնարկած այս Բանանայական Միութիւնը լուռ բայց պերճաբոս յանդիմանութիւն մըն է Պոլսոյ քահանայութեան, որ չկրցաւ պիտի հանել այդպիսի Միութիւն մը, մէկ կողմէ իր նիւթական վիճակը բարելաւելու, եւ մանաւանդ միտ կողմէ իր իմացական զարգացումին զարկ տալու, եւ ներկայ սկսապիկ դարուն մէջ ժողովրդեան հանդէպ իր ունեցած պարտականութեան լիովին դիտակցութիւն ձեռք բերելու նպատակով: Պէտք է խոստովանել որ քահանայք՝ հաւաքաբար՝ մեծ պատասխանատուութեան տակ կը մնան իրենց «ինկած» վիճակէն բարձրանալու: Ճիշդ մը չընելով Փափաղէի էր միայն իմանալ Կիրիկեան Բանանայական Միութեան նըպասակն ու ծրագիրը:

(1) Պէտք է դիտել մէկ կանոնէն Հարց շարականները միայն յօրինուած ու երգուած են: Օրհնութիւնները չկային:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐ

(ԱՌԱՋԻՆԿԱՅ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ)

2 (')

Ա. ԿԱՐԱՊԵՏ ԵՊ. Տ. ՄԿՐՏԻՉԵԱՆ.—

Այս եկեղեցականին համար բռնան պայ-
քար կը մղեն իր ընկերներն ու բարեկամ-
ները Զինքը մինչև երկինք բարձրացնող-
ներու հետ պարսառողներ ալ պակաս չեն։
Մասնաւորապէս զիտի կուտանք թէ ա-
մենապատուական Հայ մը, կապիկ խան
Սարաճեան, որ մօտէն ծանօթ է Կարա-
պետ Եպ. ի գործունէութեան ի Դաւրէժ,
ամենածանր դիտողութիւններ բրած է Կա-
րապետ Եպ. պաշտօնավարութեան զէմ։

Թեր ու զէմ բռնածներէն մեր հանած
եզրակացութիւնը սա է թէ Կարապետ
Եպ. իբր ուսումնական մարդ անմիտեի
արժանիքներ ունի. սակայն չունի վար-
չական ձիրք։ Իր անցեալ գործունէութեան
մէջ ոչինչ կայ երաշխաւորող թէ անիկա
լու Հայրապետ մը պիտի ըլլայ։ Մասնա-
ւորապէս անմիտեիորէն կ'երեւայ թէ
Կարապետ Եպ. Տ. Մկրտիչեան կարի յա-
ւակնու, բաւական մեծամիտ ու ինքնա-
հաւան անձ մըն է։ Եւրօպական ուսումը
չէ կրցած յղկել զինքը եւ կարգապահ
դարձնել։ Հակառակ Կաթողիկոսին ազգա-
բարութեան անհրաժան Ռուսիա երթալը
եւ Կաթողիկոսին հանգիւյ ցոյց տուած
անպատկառ վարմունքը կ'ապացուցանեն
այս իրողութիւնը։

Դարձեալ պէտք է աչքէ չվրիպեցնել
սա ճշմարտութիւնը թէ Կարապետ Եպ. Տ.
Մկրտիչեան նեղմիտ Աստուածաբան մըն
է եւ կղերական գերազանցութեան պաշտ-
պան մը, որով ամենայն հուանականու-
թեամբ պիտի քանգէ ժողովրդական-աս-
մանադրական ոգւով մշակուած որ եւ է
վարչական ծրարիւր, ինչ որ ազատարեք է
պարզապէս Ռուսահայոց համար։ Նոյնպէս
զիտի կուտամ թէ Ամենայն Հայոց Կա-

թողիկոսի մը անմիջական գործակիցները
եւ շրջապատողները Իջմբածնայ միաբան-
ներն են, որոնք երկու կուսակցութեան
բաժնուած, միշտ իրարու դէմ կը մաքա-
սին ազդեցութեան եւ պաշտօնի համար։
Կաթողիկոսները անխուսափելիօրէն ի-
րենց զաղափարներուն հետեւելով պար-
տաւորութեամբ են նախընտրել այդ երկու
կուսակցութիւններէն մէկը, եւ ասով ա-
տելի գաղտնալ միւսներուն։

Իզմիրլեան Կաթողիկոս ինքզինքը
կուսակցութիւններէ վեր բռնելու, եւ պաշ-
տօններու բաժանման պարագային ասոր
անոր շնորհուի ընելու զրպարտութենէն
զերծ մնալու համար, վանքին մէջ պաշ-
տօններու բաժանումը միաբանական քուէ-
ներով կատարելու որոշումը տուաւ եւ
գործադրեց։

Միաբանութիւնը՝ ասով ինչն անուա-
նած կ'ըլլայ իր գլխաւոր գերակատար-
ները, եւ Կաթողիկոսը ամբաստանելու
պէտք չէր ունենար թէ մէկուն կողմակ-
ցութիւն բրաւ։ Այսքան աստիճանաւոր սկզբ-
բունք մը կիրարկելով հանգերձ, Իզմիր-
լեան Կաթողիկոս զերծ չմնաց ասոր զըր-
պարտութիւններէ, զոր գաղափարին փոք-
րամասնութեան պատկանողները, որոնք
մեծամասնութեան ազդեցութեան տակ ըլ-
լալու մեղադրանքը բարեցին հոգեւոյս
մեծանձն Կաթողիկոսին վրայ։

Այդ փոքրամասնութեան պետն է՝
Սուքիաս Արքեպ. Պարզեւնց, շիշըր՝ Կա-
րապետ Եպ. Տ. Մկրտիչեան, իսկ գլխա-
ւոր անդամները՝ Դարեգին վրդ. Յովսէփ-
եան, Յուսիկ վրդ. Զօհրապեան, Բենիկ
վրդ., Արտակ վրդ. Իրենց օրկանն է Հո-
վիս։

Իսկ մեծամասնութեան պետն է՝ Սու-
րէնեանց Գէորգ Արքեպ. (Տեղակալը),
շիշըր՝ Մեսրոպ Եպ. Տ. Մովսէսեան, եւ
գլխաւոր անդամները՝ Յուսիկ Արքեպ.,
Սահակ վրդ. Ամատունի, Մաթթէոս վրդ.,
Բարդէն վրդ. Աղաւէլեան, Ներսէս վրդ.
Միլիքթեան, Ներսէս վրդ. Տ. Միքա-
յէլեան եւ այլն։

Այս երկու խումբերը որոնք կը պա-
հեն զիտ իրենց զոյութիւնը, պահած են

(1) Շար. 40րդ. Թիւէն եւ վերջ։

նաեւ իրենց մեծամասնութեան եւ փոքրամասնութեան հանդամանքը:

Եթէ Կարապետ Եպ. Տ. Մկրտիչեան յաջողի կաթողիկոս ընտրուիլ, իբր փոքրամասնութեան մարդը եւ մեծամասնութեան ռեպրէզէնտ, պիտի չըրջապատուի իրեն հակառակորդին, որոնք մեծամասնութիւն ըլլալով կրնան շատ մեծ խոչընդոտներ հանել իր դործունէութեան դէմ:

Եւ իբր չեղտուած կուսակցական, լրքուած ընդդիմադիրներէն, պիտի յարի եւ պիտի յենու իր կուսակիցներուն, ոչ ոնք շատ յանձնարարելի նկարագիր մը չունին:

Մասնաւորապէս դիտելի է որ այդ կուսակցութեան պետը՝ Սուքիաս Արքեպ. կաթողիկոսին միապետական զբոսութեամբ կառավարելուն կուսակից է. եւ եթէ Կարապետ Եպ. Տ. Մկրտիչեան համամիտ է այս մասին Սուքիաս Արքեպ.ի, առանց վարանման կրնանք յայտարարել թէ անարժան է կաթողիկոսութեան: Հայ Եկեղեցւոյ Պետ ըլլալու սահմանուած եկեղեցականը ամէն բանէ առաջ Հայ Եկեղեցւոյ ողին պէտք է իւրացուցած ըլլայ, եւ ուր որ չընդունիր Հայ Եկեղեցւոյ ժողովրդական վարչութիւնը, արդէն ինքնին հակասած է այդ ողուն դէմ, եւ պէտք է բարձրանայ Հայրապետական տիպոս:

Դարձեալ պէտք է նկատել Կարապետ Եպ. Տ. Մկրտիչեանի թեկնածութեան պաշտպաններուն գաղափարները, իր իսկ գաղափարը ըմբռնելու համար: «Ըսէք ինձի ձեր բարեկամները, բոեմ ձեզի ձեր ուր ըլլալը» ըստ սոսկ է: Կարապետ Եպ. ի թեկնածութեան տնայնէն զլսած որ պաշտպանն է Հովիւս, կղերական-յեսադիմական օսկանը, որուն Իզմիրլեան կաթողիկոսի դէմ բացած գոհիկ պաշարը՝ մասնաւորապէս անոր էջմիածնայ վանքին մէջ հաստատած ուսմիավար վարչութեան եւ թեմական կազմակերպութեան մէջ մացուցած Սահմանադրական սկզբունց համար՝ տակաւին չէ մոռցուած:

Այդ ստորին պայքարին մէջ Կարապետ Եպ. Տ. Մկրտիչեան եւ իր կուսակիցները, ըսուեցաւ թէ տխուր դեր մը կատարած են:

Այն ատեն ըսուեցաւ նաեւ թէ Ասոր-պատականի Առաջնորդը՝ Կարապետ Եպ. Տ. Մկրտիչեան՝ առանց կաթողիկոսական արտօնութեան Դաւթի վարժարանին ի նպաստ իբր թէ հանդանակութիւն մը ընելու պատրուակով Թիֆլիս փութացած էր, եւ հոն Հովիւս խմբագրատան մէջ Իզմիրլեան կաթողիկոսը վարկաբեկելուն զատակով խորհրդակցական ժողովներ կազմած էր: Այդ ժողովներուն մասնակցած էր նաեւ Թրքահայ նորապսակ եպիսկոպոս մը, որուն ի վերջոյ Իզմիրլեան կաթողիկոս ստիպուած էր հրամայել Կովկասէն շուտով մեկնիլ: Հիմա այդ նոյն եպիսկոպոսը որուն գաղափարներուն եւ հայեացքներուն հաշտ ու հաւան չենք կրնար ըլլալ, Թրքահայոց մէջ Կարապետ Եպ. Տ. Մկրտիչեանի բրորականը կը մղէ: Կարապետ Եպ. Տ. Մկրտիչեանի պաշտպաններուն մէջ անշուշտ առաջնակարգ տեղ ունի նաեւ կարգաթող Երուանդ Տ. Մինասեանը, որ ամէն ապօրինութիւն ըրաւ կարգադրել ըլլալու համար, եւ երբ տեսաւ թէ կը յամառին զինքը այդ պատիւէն զրկելու, դասալքութիւնը նախընտրեց:

Անշուշտ անոնց մէջ պէտք է ըլլայ համրաւոր Բենիկ վարդապետը, Երխանակելու եւ աղմուկ յարուցանելու գերազանց յատկութեամբ օժտուած է:

Ահա իր մեծ թարեկամները, ամէնքն ալ ոչ-յանձնարարելի տիպարներ, որոնք ընտկան է թէ իր կաթողիկոսական թեկնածութիւնն ալ անյանձնարարելի կը դարձնեն^(*):

Բ. ԴԵՈՐԳ. ԱՐՔԵՊ. ՍՈՒՐԷՆԵԱՆՑ.

— Նախորդ եւ արդի Տեղակալը: Իր վրայ անուած տեղեկութիւնները չափազանց հակասական են: Գլխաւոր թիրութիւնը որ իրեն կը վերագրուի, իր թոյլ նկարա-

(*) Մեր համակրելի աշխատակցին կամող. խնդրոյն վրայ գրած այս յօդուածաշարքը մեծ շահագրգռութեամբ կարդացուեցաւ. բայց հարկ կը զգանք շեշտել թէ ընտրելիներու տնձին և զանոնք շրջապատողներու վրայ իր յայտնած կարծիքները խմբագրութեան հայեացքները չեն ցնդանք բոլորովին: Ծ. ԽՄԲ.

գիրն է, զոր իր բարեկամներն ալ չեն ժխտեր:

Իր կաթողիկոսացումը՝ վանքին համար բնաւ նպաստաւոր չի կրնար ըլլալ, ճիշդ այն նկատումներով որ Կարապետ Եպ.՝ իր կուսակցական՝ չի կրնար ըլլալ: Գէորգ Արքեպ. ի կաթողիկոսացումը մեծամասնութեան կուսակցութեան իշխանութեան յարատեւութիւնը պիտի ապահովէ, եւ փոքրամասնութիւնը միշտ պիտի շարունակէ իր պայքարը:

Գէորգ Արքեպ. Սուրենեանց ունի բաւ յատկութիւններ եւ վարչական ընդունակութիւններ, սակայն գործիք գաղաւթ վտանգին տակ կը գտնուի: Անձնապէս յանուն Իզմիրեան սրբազանի երգուընցող մըն է, եւ որովհետեւ անոր պաշտօնավարութեան բոլոր շրջանին մէջ՝ իր խորհրդական՝ հոգեւոյս Հայրապետին գաղափարներուն եւ սկզբունքներուն մօտէն տեղեակ եւ յարաբերական գործոց ընթացքին հմուտ է, այս տեսակէտով իր պաշտօնավարութիւնը կրնար օգտակար ըլլալ, եթէ ապահովուած ըլլար իր անկախութիւնը... զոր այժմէն կը փորձեն կ'ըսեն կաշկանդել ոմանք... իր փառասիրութեան գոհացում տալով:

Սուրենեանց Արքեպ. կաթողիկոսանալու փափաքող մըն է, եւ իր կաթողիկոսութիւնը միատակար չի կրնար ըլլալ, սակայն կաթողիկոսանալու համար իր ընտրած ճամբան շատ սխալ է: Մասնաւորապէս իր թեկնածութեան աշխատողներուն զինքը իրենց ձեռքին մէջ առնելու հաստատ մտադրութիւնը, կամ աւելի ճիշդ ըսելով իր ընտրութիւնը առաջ քշելով ուրիշ մը յաջողցնելու դիտումը թէ՛ կը նուազեցնեն իր յաջողութեան հաւանականութիւնը եւ թէ սրիշներու հաւանութիւնը իրմէն կը հեռացնեն:

Իբր պարկեշտ, ազնուորարոյ, կենցաղագէտ եկեղեցական ինքը, բնաւ ընդադատուած չէ, սակայն իր կուսակցական պետի հանգամանքը, եւ կուսակցութեան մի ընտրելին ըլլալը երկու գլխաւոր արդեւորներն են իր ընտրելութեան,

որ արդէն շատ մեծ հաւանականութիւն մըն ալ չի ներկայացներ:

Գ. ԲՍԳԱՐՍԱՏ ՎՐԴ. ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆ.

— Կաթողիկոսական աթոռ բարձրանալու համար միայն վարդապետ ըլլալու արդեւորութիւնը Բագարատ վրդ. անձը կը մնայ ամէն քննադատութենէ վեր: Իր հակառակորդները, իր թշնամիներն իսկ պատկառանք կը խօսին իր վրայ, եւ չեն կրնար զինքը խժրժել:

Մասնաւորապէս երկու առն վանքէն դուրս մնացած ըլլալով, իրեն անմիջական գործակիցը ըլլալու սահմանուած էջմիածնայ միաբանութեան մէջ կազմուած երկու կուսակցութիւններէն դուրս մնացած է, եւ անկողմնակալ եւ անկախ դիրք մը ունի:

Իր անցեալը, իր առայդ գործունէութիւնը, իր յատաջգրական գաղափարները ամէն կերպով զինքն արժանի կը դարձնեն կաթողիկոսական աթոռ բարձրանալու:

Իր հակառակորդները իր անձին զէմ չկրնալով պայքարիլ, իր աստիճանը խնդրոյ առարկայ ըրին: Եւ Ռուսահայ կղերը, մասնաւորապէս էջմիածնայ միաբանութիւնը, դաւեց այս ամէն սրժանիք ունեցող եկեղեցականին զէմ, Ռուս Ներքին գործոց նախարարութիւնէն իր ընտրելութիւնը ջուրը ձգող պատասխան մը բերել տալով:

Սակայն մեր կարծիքով, որչափ տոնն որ Պաշտօնեկայի զանազան արամադրութեանց մէջ կը յանձնարարուի վարուիլ «ըստ կարգաց եւ կանոնաց Հայաստանեայց Եկեղեցւոյ», որ եւ է արդեւոր չենք տեսնիր մինք Բագարատ վրդ. ընտրութեան մէջ, քանի որ Հայաստանեայց Եկեղեցւոյ կարգերուն եւ կանոններուն ըստ ամենայնի համաձայն է վարդապետներու եւ նոյն իսկ աշխարհականներու Ամենայն Հայոց կաթողիկոսական Աթոռ բարձրանալը՝ ազգային ընտրութեամբ:

ԱՐՇԱԿ Ա. ԱԼՊԾԱՃԵԱՆ



ԹԵՂԱՆԴՐԻՉ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

«ԻՆՉՈ՞Ւ ԵՐՋԱՆԻԿ ԶԸԼԼԱՄ»

— Շատ երջանիկ կ'երեւաք :

— Ինչո՞ւ երջանիկ չըլլամ : Դեռ երկու ձեռքեր ունիմ որոնցմով կրնամ աշխատիլ ու ապրուստ չահիլ :

Այս պատասխանը տուող մարդը սղոյարանի մը մեծ արագութեամբ դարձող սղոյին առջև. նստած իր գործով կ'զբաղէր : Ան արագ ձեռքերով կ'առնէր բազկ տախտակները, որոնք սղոյին բերնէն կ'իջնային, ու իրմէ քիչ մը անդին կը դնէր. զանոնք հոն վրայէ վրայ կը զիղէր մինչեւ որ ուղուած քանակութիւնով բլային, ու անկէ ետքը արիւնջ դորձաւորներ զանանք թելով կապոց կը կապէին քաւաղձաւտձառին խանութը դրկուելու վիճակին մէջ պատրաստ կ'ընէին :

Բայց ոչ ոք անսած էր այս մարդուն քալելը. ան չէր կրնար քալել, որովհետեւ ոտքերը փայտեայ, կեղծ ոտքեր էին. սոսկալի արկածի մը ասիթով ան իր երկու ոտքերը կորսնցուցած էր : Բայց հակառակ այդ մեծ դժբախտութեան, սրչափ ուրախ ու երջանիկ էր ան : Ոչ ոքէ դժութիւն չէր մուրար : Աշխարհ անոր համար արեւ ու լոյս էր համակ, որովհետեւ ան դեռ գործելու բոլորովին անկարող վիճակի մը չէր եղած արկած :

— Ի՛նչ երկու ձեռքեր ունիմ որոնցմով կրնամ աշխատիլ, ապրուստ չահիլ ու ոչ ոքի կարօտ մնալ, ինչպէս կ'ընեն առողջ մարդիկ, կ'ըսէր ան : Բոլոր մարդիկ ինծի հետ քաղցրութեամբ կը վարուին, ինչպէս նաեւ գործաւոր բնկերները : Ոչ ոք ինծի կոչա խօսքեր չի խօսիր, վիճակիս վրայ կը խզճան ու միշտ ժողատուն զէմք կը ցուցնեն ինծի : Գործաւոր ընկերներս գործս դիւրացնելու համար ազնուութեամբ կ'օգնեն ինծի : Աշխարհի մէջ թշնամի մը չունիմ, հետեւաբար ինչո՞ւ երջանիկ չըլլամ :

(Թրգմ. Անգլ. Կ)

ՊԱՄՓԻԼԻՈՍ ԵՒ ՅՈՒԼԻՈՍ

ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ

ԺԱՄԱՆԱԿՈՒԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (1)

ԹԻ.

Պամփիլիոս կը խօսէր ասկաւին, երբ յանկարծ իր զաւակը սենեակ մտաւ եւ հօրը դիւրկը նետուեցաւ՝ ջերմագին անոր կուրծքին փարկելով : Յուլիոսի կինը թէեւ ամէն դժուանք ու փայփայանք չուայր էր ազեկին, բայց անոր քովէն փախեր եւ եկեր հօրը քով ապաստաներ էր : Պամփիլիոս իր զաւակը դժուելով հանդերձ, մեկնելու պատրաստուեցաւ : Բայց Յուլիոս վար դրաւ զինքը, խնդրելով որ միասին ճաշեն : Երկու բարեկամները վերսկսան խօսակցիլ :

— Իրաւ որ կը զարմանամ քու ամուսնանալուդ եւ զաւակներ ունենալուդ վերայ, ըսաւ Յուլիոս : Դուք, Քրիստոնեաներդ, ինչպէս կրնաք զաւակ մեծցնել, առանց անհատական ու եւ է ստացուածք ունենալու : Ասիկա դադանիք մ'է ինծի համար : Չեմ ալ հասկնար թէ Քրիստոնեայ մայրերը ի՞նչպէս կրնան սիրտերնին հանգարտ բռնել, քանի որ չեն գիտեր թէ իրենց զաւակներուն բոլոր պէտքերը պիտի կրնան հոգացուիլ ներկային եւ ապագային մէջ :

— Ի՞նչ պատճառով մեր զաւակներուն պէտքերը ձեր իննիւնէն նուազ ապահով կերպով պիտի կրնան հոգացուիլ, հարցուց Պամփիլիոս :

— Սա պատճառով որ անոնք գերիշնար չունին իրենց վրայ հսկելու համար, ոչ ալ անհատական ստացուածք՝ իրենց ապրուստի միջոցներ հայթայթելու համար : Իմ կինս շատ համակիր տրամադրութիւն մը ունի Քրիստոնեաներուն նկատմամբ, եւ նոյն իսկ ժամանակ եղաւ որ հաստատակաւ մտադրեց հիթանոսութիւնը ձգելով Քրիստոնէութիւնն ընդգրկել : Ասիկայ տեղի կ'ունենար մէկ քանի տարի առաջ, ես ալ որոշած էի հետեւիլ իր այս դար-

(1) Շար. 22րդ Թիւէն սկսեալ :

ձինս Բայց զինքն ամէն բանէ աւելի վախ-
ցնող պարագան էր Քրիստոնեականութեան զաւ-
կներուն անկաշուն վիճակը, եւ այն բազ-
մազրկի պէտքերը որոնց ենթարկուած են
անոնք: Պէտք է խոստովանիմ որ ես ալ
իր կարծիքէն էի: Այն ատեն հիւանդ պառ-
կած էի՝ անկողինին գամուած: Մինչեւ
այն ատեն վարած կեանքէս բոլորովին
դանաճ, կ'ուզէի միանգամ ընդ միշտ լքել
զայն եւ մտնել ձեր համայնքին մէջ: Բայց
մէկ կողմէ կնոջս երկիւղները, միւս կող-
մէ զիս խնամող եւ բժշկող տղթորին ա-
ռարկութիւնները համոզելին զիս թէ
քրիստոնէական կեանքը՝ այն կերպով որ
դուք կ'ըմբռնէք զայն ու կը գործադրէք,
կարելի եւ նպաստաւոր է այն ատեն միայն,
երբ մարդ ամուրի է, եւ զերծ ընտանեկան
հոգիքէ: մայրերն ու զաւակները աեղ չու-
նին այնպէս եւ պէտք չէ հոն մտնել փո-
ռնու: Մանաւանդ թէ այն կարծիքը զոյա-
ցուցի որ ձեր ընդունած եւ վարած կեան-
քը կերպով մը զաղարուծ, վախճանն է
մարդկային կեանքին եւ բնութեան օրէնք-
ներուն, եւ հետեւաբար չիջումը մարդ-
կային ցեղին: Բայց իրականութիւն մը
կայ հաս զոր կարելի չէ ուրանալ, եւ հի-
մա կը խոստովանիմ որ շատ զարմացայ
տեսնելով տղեկ մը քովիկ ի վեր:

— Աւելցնեմ որ, բնաւ Պամփիլիոս,
սուենն ալ ունիմ խանձարուրի մէջ երեւ-
խայ մը եւ երեք տարեկան աղջնակ մը:
Նրեք զաւակ ունիմ ուրեմն:

— Իրաւ կ'ըսես. բայց խնդրեմ, բա-
ցատրէ՛ ինձ, թէ ի՞նչպէս կ'ըլայ ատիկայ.
ի զուր կը խորհիմ, կը միտտեմ, չեմ կըր-
նար հասկնալ: Ինչպէս ըսի, մէկ քանի
տարի առաջ մատգրութիւն ունեցայ լքե-
լու աշխարհիկ կեանքս եւ ընդգրկելու
Քրիստոնէութիւնը: Բայց մէկ քանի զա-
ւակներու հայր էի, եւ թէ եւ այս խոջըն-
դաւը մեծ տաղտուկ պատճառեց ինձ,
այսու հանգերձ իրաւունք ունէի մտածե-
լու թէ պէտք չէ զոհեմ իմ զաւակներս եւ
անոնց ապագան: Հետեւապէս այս նկաւ
տողութիւնը կասեցուց իմ ծրագիրս, եւ
եւ վերսկսայ սովորական կեանքս, զաւակ-
ներս մեծցնելու եւ դաստիարակելու հա-

մար այն պայմաններով ուր գտնուած եմ
ես:

— Եսա տարօրինակ է քու տրամա-
բանելու եղանակը, բնաւ Պամփիլիոս:
Մենք միեւնոյն իրողութիւններէն մէկ-
մէկու տրամադծօրէն հակառակ եղբակա-
ցութիւններ կը հանենք: Մենք կը՝ մաա-
ծենք թէ աշխարհի մարդիկը մինչեւ պս-
տիճան մը արդարանայի են, որովհետեւ
ընկերային կեանքը ապականաճ է զերեւնք:
Բայց զաւակները. սոսկալի, հրէշային
բան է անոնց հետ ապրիլ այդ աշխարհիկ
կեանքին մէջ, եւ չարունակ զանոնք են-
թարկուած տեսնել անոր վտանգներուն
եւ փորձութիւններուն: «Վա՛յ աշխարհին,
իր մոլորութիւններուն պատճառով, որովհե-
տեւ չկայ գոյութիւն՝ առանց մոլորութե-
աներու: Բայց վա՛յ անոր որ այդ մոլորութե-
անին առաջ բերած է»: Ասոնք մեր տիրոջը
խօսքերն են, եւ ես առաջ կը բերեմ այս
խօսքերը, ոչ թէ ձեզի հակառակ խօսե-
լու: հաճոյքին համար, այլ որովհետեւ ճշ-
մարտութեան արտայայտութիւնն են: Մեր
ապրելու ներկայ եղանակը պարտադրուած
է մեր զաւակներէն, այն անմեղ էակնե-
րէն որոնց համար ըսուած է. «եթէ դուք
այս պղտիկ աղաքներուն պէս չըլլաք, չէք
կրնար երկնքի արքայութիւնը մանկել»:

— Բայց Քրիստոնեայ ընտանիք մը
ի՞նչպէս կրնայ ապրիլ առանց գոյութեան
ապահով եւ որոշեալ միջոցներու:

— Մեր հաւատքին համաձայն, գոյու-
թեան միջոցները միակ տեսակ մըն են:
Մենք, մարդկութեան տիրոջ ոգևորուած,
տիեզերական բարիքին համար կ'աշխատենք.
ձեր հարստութիւններն ընդհակառակն յա-
ռաջ կուգան բռնութիւնէն, որ կրնայ ոչն-
չանալ հարստութիւններուն նման, եւ այն
ատեն ա'լ տրիշ բան չի մնար եթէ ոչ
աշխատութիւնն եւ մարդկութեան սէրը:
Այս երկու անայլալ սկզբունքներուն
վրայ հիմնուած, ընտանիքը ոչ միայն ֆի-
զոլութիւնը կրնայ պահել, այլեւ կրնայ
բարգաւաճիլ:

«Ոչ, չարունակեց Պամփիլիոս, եթէ
տարակոյս ունենայի Քրիստոսի վարդա-
պետութեան ճշմարտութեան վրայ, եթէ

վայրկեան մը վարանէի զանոնք դորձադ-
րել, իմ վարանումներս եւ կասկածներս
պիտի անհետանային, երբ աչքիս առջեւ
բերէի հեթանոսական կրօնքին մէջ մեծ-
ցած տղոց ենթարկուած դժբախտ վիճակն
եւ տխուր ճակատագիրը:

ԼԷՈՆ ԹՈՒՍԹՈՅ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ անցեալ ուրբա-
թի նիստին մէջ վերջ առաւ Կաթող-
պատուիրակի ընտրութեան առթիւ բաց-
ուած վիճարանութեան, եւ կարգ մը բա-
նաձևերու մէջէն 27 քուէով (ընդդէմ
Արամեանց բանաձևի 24 քուէին, եւ Թէ-
քէեան բանաձևի 11 քուէին) ընդունեց
հետեւեալ բանաձևը, զոր ստորագրած
էին Տեառք Միհրդատ Հայկազն, Խոսրով-
եան, Էսմէրեան եւ Վրամեան, — «Ազգ.
Ժողովը յետ երկար եւ հասուն խորհր-
դակցութեան կ'որոշէ ազատ թողուլ իր
պատգամաւորը յառաջիկայ կաթող. ընտ-
րութեան մէջ: Սակայն միւս կողմէ Ազգ.
Ժողովը բարոյական պարտաւորութեան
տակ կը դնէ ինչպէս իր պատգամաւորը,
նոյնպէս բոլոր թրքահայ պատգամաւոր-
ները՝ բացարձակապէս քուէ չտալ այն ե-
կեղեցականներուն, որոնք կ'ամբաս-
տանութեան տակ են, եւ կամ ընդհանուր
համակրանք զրաւած չեն ազգին մէջ»:

Ի վերջոյ ձեռնարկուեցաւ պատգամա-
ւորի ընտրութեան Բուէարկութեան մաս-
նակցեցան 59 քուէարկուներ, եւ ար-
դիւնքն եղաւ.

Աղեքս. Փանոսեան	26 քուէ
Օրնիկ Զիֆթէսարաֆ	25 »
Սպիտակ	4 »
Հրանտ Ասատուր	2 »
Պարգեւ Փափաղեան	1 »
Տքթ. Վ. Թորգոմեան	1 »

Գումար 59

Հետեւեալէս ոչ ոք չահած էր մեծա-
ւանութիւն, եւ հարկ էր առաջին երկու

ընտրելիներուն վրայ կատարել նոր քուէ-
արկութիւն, որ յաջորդ նիստին թողուե-
ցաւ:

Ժողովոյ նոյն նիստին մէջ Արքիսա-
կէս Գառարեան էֆ. հարցում բրաւ Օր-
մանեան Ս.ի յետեալ պահանջքին մասին,
յիշեցնելով որ կառքի զրամ ծախսած է
անհրաման, եւ բացատրութիւն պահան-
ջելով Վարչութիւնէն Յղուեցաւ Վարչու-
թեան:

Եգ. Շիրինեան էֆ. զրով մը հարցուց
թէ Ատանայի արկածեալներուն յաւկաց-
եալ պետական նպաստը պիտո՞ւնէին մէջ
անցած է թէ ոչ: Տեղապահ Ս.ը պատաս-
խանեց թէ Ներքին դորձոց նախարարը
խոստացած է իրեն: Ժողովն որոշեց վերջ-
նական պատասխան մը աւելու համար
յղել Վարչութեան:

Ազգ. Ժողովոյ նիստէն ետքը, ե-
րեսիոստն Վ. Թէքէեան էֆ. հրաժարագիր
ղրկեց Կեդրոնի խմբակցութեան ատենա-
պետին, ըսելով թէ «ընկերներէ ոմանց
թուլամորթ անհասկացողութիւնը, ուրիշներու
բացարձակ անհասկացողութիւնը, եւ ո-
մանց ալ գիտական չտեսութեամբ գործած
ձախաւերութիւնները» պարտք կը դնեն
իրեն վրայ, ամէն կապ խզել այդ մար-
մնոյն հետ:

ԵՐՈՒՍՍԱՆԻ Միաբանական Ժողո-
վը Հոկտ. 14ին զուգարուելով Պատր.
ընտրելիաց եօթնամունց ցանկը պատրաս-
տել է հետեւեալ կերպով.—

Տ. Եղիշէ Եպ. Զիլինկիրեան	39 քուէ
Տ. Գէորգ Արքեպ. Նրէյեան	34 »
Տ. Տրդատ Եպ. Պալեան	29 »
Տ. Եղիա Վրդ.	29 »
Տ. Գրիգորիս Վ.	28 »
Տ. Վահան Վ.	26 »
Տ. Հմայեակ Վ.	25 »

Իրտելի է որ ցանկին մէջ չեն երե-
ւար ոչ Տ. Դանիէլ Արքեպ. որ հաւանա-
բար ինք հրաժարած է ընտրելիութենէ, եւ
ոչ Տ. Մեսրոպ եւ Տ. Սմբատ Վ. ներք,
որոնք վանքին կարեւոր տարրերն են:

Նոր հեռագրով մը Բշ. օրը եւանուն
ցանկ մ'ալ հասաւ Պատրիարքարան, որով
ընտրելի կը ցուցուին:

Տ. Դէորդ Արքեպ. Երէցեան	32 քուէ
Տ. Եղիշէ Եպ. Զիլինկիրեան	26 »
Տ. Տրդատ Եպ. Պալեան	20 »

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ. —

Հայոց եւ Յունաց Պատրիարքարաններու եւ Պուլկարաց Եկեղեցարանի փոխանորդներէն կազմուած միջազգային յանձնախումբը, որ ժամանակէ մը ի վեր դադրեցուցած էր նիստերը, Յունաց Պատրիարքարանի առաջարկութեամբ վերստին կը գումարուի, քանի մը ստիպողական խնդիրներ ի նկատ առնելու եւ Դահլիճին ուղարկութեան ներկայացնելու համար։ Այդ խնդիրներու զխաւորներէն մէկը կը կազմեն Պատրիարքարաններու առաջարկները՝ ի մասին նահանգային կանոնադրին, զոր վարչապետը եւ ուղած է՝ ուսումնասիրելու եւ բարելոխելու համար, եւ որ Պատրիարքարաններուն կը զլանայ մինչեւ իսկ կալուածական եւ այլ իրմութեայէրներ ստղու Ֆէրմաններով հաստատուած իրաւունքը։

*, Հայ, Յոյն եւ Պուլկար ներկայացուցիչներէ խառն պատուիրակութիւն մը Դշ. օր Վարչապետ Սախա փաշայի ներկայանալով՝ կրթական եւ զինուորական խնդրոց առթիւ եղած հաւաքական դիմումին ցարդ արդիւնք մը չունենալը յայտնեց, եւ. առոնց արագ լուծման անհրաժեշտութեան վրայ պնդեց։ Վարչապետը մի առ մի նոթագրեց եղած պահանջումները, եւ. խոստացաւ. ներկայացուած ծրարագիրը Նախարարաց Խորհուրդին յանձնել եւ հարկ եղած կարգադրութիւններն ընել։ Պատուիրակները խօսեցան մասնաւորապէս գաւառաց մէջ պատահած սպանութեանց վրայ, եւ. յայտնեցին թէ այն դադափարը կը զոյսնայ որ յատուկ դիտում մը կայ ումանց կողմէ։ Վարչապետն հերքեց այդ կարծիքը, ըսելով թէ երկիր մը չի կրնար իր միաօրին աշխատիլ, այդպիսի դիտում մը սնուցանելով իր գաւառացի գէմ։

*, Ներքին գործոց նախարարութիւնը, Խոյթի գէպքին առթիւ. ազգ մը հրատարակած է լրագրաց մէջ թէ Բաղէշի մէջ անդորրութիւնն ամէն ժամանակէ աւելի ապահովելու համար արտաքոյ կարգի

ջանքեր կ'ըլլան կուսակալութեան կողմէ, եւ թէ Խոյթի գէպքին բուն հեղինակները ձերբակալելու համար պէտք եղած անձերէն բացարձակ խոստում առնուած է։

Տ. ՆԵՐՍԷՍ ԵՊ. ԴԱՆԻԷԼԵԱՆ, որ իր ակարութիւնը դարմանելու համար Պէրութ գացած էր, Հալէպի առաջնորդ ընտրուած է։ ՍԵՐԱՍՏԻՈՅ առաջնորդ Տ. Թորգոմ Եպիսկ. հրաժարական տուած է պաշտօնէն։ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ յանձնաժողովը 6000 ոսկիի գնեց Շիշլի Տքդ. Բլէշքօֆի դարմանատունը՝ Ազգ. Որրանոցի վերածելու համար։

ԱՅՐԻԱԽՆԱՄ յանձնաժողովը տիկիններէ բաղկացեալ յանձնախումբ մը կազմած է, հսկելու համար մանկաբարձութիւն ուսանող այրիներու վրայ։ Անգամսկիցներն են Տիկնայք Յ. Մոստիչեան, Տքդ. Ճէվահիրճեան, Ի. Ս. Հալաճեան, Արամ Սնտօնեան եւ Եկէնեան։

ԳԱՀԱՆԱՅԻՅ ՎԵՐԱՄԱՍՆՈՒԹԻԻՆԸ. — Ծ. Դարահիսարի թեմերէն Մէսուտիկի Տ. Սուքիաս քահանայ Կրօն. Ժողովէն վերամուսնութիւն խնդրած է, իր երիցունին մեռնելով եւ ինք ալ երեք որբեր ունենալով. հակառակ պարագային սիրտի հարկադրոյի կարգաթող ըլլալ։ Կրօն. Ժողովը ձեռնհաս չզգար ինքզինքը լուծելու այս խնդրը, որ հոգելոյս Խըրիմեան կաթողիկոսի օրով յուզուած բայց լուծում չէ ստացած։

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԸ ՀՐԿԻԶՈՒՄԸ կը ծանուցուի Օրտուի Զօգտամ — Դարաքիրազ գիւղէն։ Օրտուի Առաջն. փոխանորդը կը գրէ թէ 200 տարուան հնութիւն ունեցող այդ եկեղեցին (Ս. Աստուածածին) դիւմա հրդեհուած է գիւղին սահմանակից Թուրքերու կողմէ, որոնք Զօգտամցի Հայերուն հետ հողային դատ մը ունենալով, քանիցս յայտնապէս սպառնացած էին գիւղն ու եկեղեցին հրդեհել։

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՍ րազմաթիւ քահանայներ հանրագիր մը ներկայացուցած են Տեղապահ Ս. Հօր, պարզելով իրենց նիւթական անյուշ վիճակը, եւ անոր դարման խնդրելով, ի մէջ ալ ոչ պահանջելով որ քահանայից պսակդրամը Պատրիարքարանի կողմէ գանձուի ըստ առաջնոյն։

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎԸ

Պատր. ընտրելիաց ցանկը պատրաստեալու համար Համագումարի նիստը տեղի ունեցաւ Նշ. օր, 59 հրաւիրեալներէ 36ին ներկայութեամբ: Կր նախագահէր Տեղապահ Ա. ք. եւ Դիւանին Ատենապետ ընտրուեցաւ Արշարունի Ս., եւ Ատենապետի Դեղամ Վ. Բուհարեղութեան սկսուելէ առաջ ոգևորեալ վիճաբանութիւններ եղան թէ ինչո՞ւ ընտրելիաց ցանկէն զուրս ձգուած են Օրմանեան եւ Երէցեան Ս. ներք, քանի որ Համագումարի պաշտօնն է քուէ տալ այն եպիսկոպոսաց զորս կրօնական ղեւանքն անընդունելի չի համարիր: Եզնիկ Ծ. Վ. Պապեան եւ Գէորգ Բ. Անանեան պնդեցին այս կէտին վրայ. իրենց համար գտնուեցան Տ. Վահան Ծ. Վ. Յակոբեան, Տ. Խոսրով Ծ. Վ. Էւն. Իսկ Տ. Սահակ Ծ. Վ. Օտապաշեան, Տ. Գրիգորիս Ծ. Վ. Պալաքեան եւ այլք, պնդեցին Սահմանադրութեան Ա. յօդուածի պահանջման վրայ թէ ընտրելին ընդհանուր ազգին վստահութեան եւ համարման արժանի ըլլալու է: Տ. Գրիգորիս Ծ. Վ. իբրեւ Կրօն. Ժողովոյ Ատենապետ, յայտարարեց նաեւ թէ նոյն երկու եկեղեցականաց ցանկէն զուրս ձգուելը կրկնութիւնն է իրենց անմիջական նախորդին որոշման, որովհետեւ նոյն եկեղեցականաց մասին մեղմացուցիչ պարագաներ երեւան եկած չէին անկէ ի վեր: Ոգևորեալ վիճաբանութիւններէ ետք, Ժողովը համամիտ գտնուեցաւ թերթիս անօրէն-խմբագիր Տ. Զարմայր Բ. ի որ չեչաեց ի կրօնականին ու եւ է արգելք չըլլալով հանդերձ, երկու եպիսկոպոսներու ցանկէն զուրս ձգուելու անպատշաճութիւնը, բայց Ժողովական Հայրերու ուշադրութեան ներկայացուց թէ Հայ ազգին մէջ եկեղեցական եւ աշխարհական անջատ դասակարգեր չեն կազմեր, ուստի ներկայ եկեղեցականաց խղճին եւ չըջահայեցութեան կոչում ըրտա՝ ի նկատ առնել ազգին աշխարհական դասակարգին հոգեկան արամադրութիւնները, չլայնցնելու եւ չխորունկցնելու համար աշխարհականութեան եւ հոգեւորականութեան միջեւ երեւնալ սկսող անհասկացողութեան խրամատը, եւ ըստ այնմ տալ իրենց քուէները: Բուհարեղութեան մասնակցեցան 35 եկեղեցականներ, եւ արդիւնքը եղաւ.

1. Տ. Յովհ. Արքեպ. Արշարունի	22 քուէ
2. Ստեփաննոս Արքեպ. Յովակիմեան	19 »
3. Եղիշէ Արքեպ. Դուրեան	16 »
4. Գէորգ Արքեպ. Երէցեան (ցանկէն դուրս)	11 »
5. Յովսէփ Արքեպ. Սարսենեան	10 »
6. Դարբիէլ Եպ. Ճէվանիրսեան	10 »
7. Հմայեակ Արքեպ. Դիւսքեան	9 »

8. » Զաւէն Եպ. Եղիսեան	7 քուէ
9. » Սմբատ Եպ. Սասնէճեան	7 »
10. » Վահրամ Արքեպ. Մանկունի	6 »
11. » Թորգոմ Եպ. Գուշակեան	4 »
12. » Տրդատ Եպ. Պալեան	2 »
13. » Գրիգորիս Արքեպ. Յովհաննէսեան	2 »
14. » Մաղաքիա Եպ. Տէրունեան	2 »
15. » Յակոբ Եպ. Աշոտ փափաղեան	2 »
16. » Ներսէս Եպ. Խարախանեան	2 »
17. » Եղիշէ Եպ. Զիլինկիւրեան	2 »
18. » Դանիէլ Արքեպ. Յակոբեան	2 »
19. » Բարգէն Եպ. Կիւլէտէրեան	2 »
20. » Մովսէս Եպ. Ափսրիւքեան	1 »
21. » Մաղաքիա Արքեպ. Օրմանեան (ցանկէն դուրս)	1 »

ՕՐՄԱՆԵԱՆ Ս. Ի ՆԵՂԻՐԸ

Ատենապետաց Դիւանին հրաւերով, որուն կը նախագահէր Տեղապահ Ա. ք. Դ. օր, Օրմանեան Ս. ներկայանալով բացաւ արութիւն տուաւ ի մասին Վառմանէ Գ. Ի ամբաստանութեան Ըսաւ թէ 1906 Սեպտեմբերի սկիզբը էջմիածնայ մէջ գումարուած Ժողովին փակուումն ետքը որ ինքը ակտակցած է Ռուս դեսոպանատան Գ. Թարգման Պ. Նիքոլայէֆի հետ, որուն ըսած է միայն թէ անիկա տեղական Ժողով մ'է եւ Թրքահայոց հետ աղնչութիւն չունի: Ատկէ դուրս ո՛չ յեղափոխան մարմնոյ խօսք եղած եւ ոչ ալ ուրիշ բան ըսած է, ինք հաղորդած է ինչ որ կարդացած էր Ռուսահայ Թերթերու մէջ, եւ Ժողովին օրինաւորութեան դէմ բան չէր կրնար ըսել, քանի որ նախագահը Կաթողիկոսն էր: Օրմանեան Ս. իր յայտարարութեանց գումար մէկ ամիսովու մի ալ յանձնեց եւ մեկնեցաւ:

* Թիֆլիզի վաճառականներու պետ Արշակ Միլոֆ եւ Արթուր Միլոֆ ստորագրութեամբ եւ Հոկա 3) (Ն. Տ.) հետապնդ իր մը հասած է Պատրիարքարան, որուն մէջ ի դիմաց վաճառականներու եւ քաղքենի եւ արհեստաւոր դասակարգերու պետներուն հրաւիրեալ ընդհ. Ժողովին, մօտ 300 հոգի, կը ծանուցուի թէ որոշմնադիր մը քուէարկած են որով «Տ. Մաղաքիա Արքեպ. Օրմանեանը կը ճանչնան միակ եւ արժանաւոր քանտիտան էջմիածնի կաթողիկոսական դահուն», կը խնդրեն ասիկա տեղեկացնել Ազգ. Ժողովին, խորին ցաւ կը յայտնեն որ Օրմանեան Ս. ի պատուոյն վերահաստատման խնդիրը «անվերջանալի եւ անբացատրելի կերպով ձգձգած է», եւ կը պահանջեն անյապաղ վճիռ տալ կառուցման նաեւ թէ ամէն յապաղում անգամ մը եւս պիտի համոզէ զիրենք թէ «այս ակամաւոր եւ կեղեցականը անմիջապէս չ'ընել»:

Արմենատէր ՀՄԱՅԵԱԿ ԲԶՆՅ. ԷՐՍԵՐՃԵԱՆ

ՕՍՄ. ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

شركة تجارية عثمانية

SOCIÉTÉ COMMERCIALE OTTOMANE

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 100,000 ՕՍՄ. ՈՍԿԻ

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ Կ. ՊՈԼԻՍ

Ա.Ռ.Ա.ՋԻՆ ՀԱՅ ԴՐԱՄԱՑՈՒՆ

ԴՐԱՄԱՑՈՒՆԵՐԸ ԱՌՃԱՐԱՑ ԿԵԴՐՈՎ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՆ

ԿԵԴՐՈՒՄ, ԴԱՐՔԱՐՔԵՐԸ ԵՆ

Հայկական սոյն զրամական հաստատութիւնը կ'ընէ փոխառութիւններ՝ տուեալ տրական առանձնութեամբ, մուրհակներով, փոխանակադրութիւններով, բաժնեկիցներով, արքայաթոշակներով, ապրանքներով եւ բեռնադիրներով վրայ:

Կուտայ չէքեր, վարկադիրներ, փոխանակադիրներ եւ հետադրական վճարումի հրամաններ՝ ինչպէս թուրքիոյ նոյնպէս աշխարհիս բոլոր մասերուն վրայ:

Կը գնէ եւ կը ծախէ ամեն տեսակ բաժնեկիցներ եւ պարտաւճարներ, թէ՛ մեր եւ թէ՛ բոլոր օտար հրապարակագրութիւններ վրայ, ինչպէս եւ օտար զրամներ:

Կը գանձէ եւ կը զեղչէ առեւտրական առանձն, մուրհակներ, փոխանակադիրներ, բաժնեկիցներ եւ կարծիներ:

Կ'ընդունի զրամական առանձններ նպաստաւոր պայմաններով:

Դրամատունն հաստատած է Առեւտր. տեղեկութիւններու համար լաւ փոխ կերպով կազմակերպուած օգտաւարութիւն մը:

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՍՆՏՈՒԿ

Խնայողութիւնը մեր հաւայեցիին մեջ քաջաշէնքով համար կ'ընդունի քանակին (25) դրուշէն սխեշով գումարներ:

Դրամատունն կը կատարէ նաեւ, թէ՛ իր հաշուոյն, թէ՛ մասնակցութեամբ եւ թէ՛ ուրիշներու հաշուոյն ամէն տեսակ արդիւնաբերութիւններով եւ ապրանքներով գնում, վաճառում, փոխանակութիւն, ներածում եւ արտածում:

Կ'ընդունի ներկայացուցչութիւն թէ՛ տեղական եւ թէ՛ օտար առանձններ:

Կը կազմէ առեւտրական եւ ճարտարարուեստական ընկերութիւններ եւ կը մասնակցի անոնց: Կ'ընէ հանրօգուտ շինութեանց վերաբերեալ ամէն տեսակ ձեռնարկութիւններ:

ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ՎԱՆՏՈՍԲ. — Կիսամսեայ հանդես տոհմային, բանասիրական, գրական եւ գեղարուեստական ձգտումներով: Վանի մէջ հրատարակուիլ սկսած շահազըրդ-ոական սրբերական մը, որուն Հոկտ. 5ի Ա. թիւին մէջ կ'երեւան ծանօթ զրոյներ՝ Խ. Լեւոնեան, Զիթունի, եւն., ամենէն սրտի մօտ՝ Կ տոհմային կեանքի եւ աւանդաբանաց վերաբերեալ գեղեցիկ գրութիւններով: Այդ թիւին մէջ կ'երևայ նաեւ «Վանայ Դիկն կամ խաղիպիան պետրիքը», Լինչի Արմենիայէն քաղուած Փափաքելի էր միայն քիչ մը աւելի մաքուր եւ խնամուած ապագրութիւն: Տարեկան 24 թիւի համար բաժնեգին՝ Թուրքիա 20 զըշ., Արտասահման 5 ու կէս ֆր. կամ 1 տօլար: Հասցէ՝ Խնթազրուրիւն ՎԱՆՏՈՍԲի, Վան:

ԲԺԻՇԿ. — Ամսաթիւրի բժշկական եւ ատոլջապահական: — Հրատարակուեցաւ

8 թիւը, հետզհետէ աւելի շահագրգռական եւ օգտակար պարունակութեամբ: Տարեկան բաժնեգին 20 զըշ.: Հասցէ Տֆր. Վահան Ղազարեան, Տրապիզոն:

ԳԱՂԱՑՈՒԱԾ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Պարսկական հէքեթներից: — Անդլիերէէ թարգմանեց Ե. Վ. Երկարակեցեան, 1911 Նոր Զուլա Տպ. Ս. Ամենաթիւրի վանքի: Պարսկական կեանքէ հետաքրքրաշարժ պատմուածք մը, սրտառու շահարմանութիւններով: Գին 30 շահի:

ԿՈՀԱԿ շարաթաթերից, գոհութեամբ կը տեսնենք թէ այս շարթու ընդարձակ է ծառայը, եւ հետզհետէ աւելի շահական կը դառնայ իր պարունակութեամբ: Փափաքելի էր միայն որ ուրիշ թերթերէ քսոռ առ քսոռ քաղուած լուր մը կամ տեսութիւն մը արտատպուած ատեն, չմոռցուէր դրուիլ անունն այն թերթին ուրիշ քաղուած է, ինչպէս եղած էր այս անգամ Տանարէն քաղուած հատուածի մը համար:

ԳԻՆ 1 ՂՐՈՒԾ

Տպագր. Տ. ՏՕՂԱՄԱՆԵԱՆ
Սուրբան-Համալ Մօլա-Թաշը, Թիւ 16
Կ. ՊՈԼԻՍ